ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԹԱՓՈՒՐ ՏԵՂԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 24.12.2020թ. «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» թիվ 48-Ն հրամանով հաստատված կարգի պահանջները՝ «Գավառի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ մանկավարժական աշխատողների հետևյալ թափուր տեղերի համալրման վերաբերյալ՝

- **Ռուսաց լեզու - 244 ժամ**
- **Օտար լեզու - 198 ժամ**
- **Ձեռներեցություն - 288 ժամ**
- **Լատիներեն լեզվի հիմունքներ - 144 ժամ**
- **Ներքին հիվանդություններ - 72 ժամ**
- **Նկարչության հմտություններ - 54 ժամ**
- **Ֆիզկուլտուրա - 708 ժամ**
- **Քույրական գործի հիմունքներ - 180 ժամ**
- **Պացիենտի կրթում - 36 ժամ**
- **Ամոքիչ խնամք - 36 ժամ**
- **Անվտանգություն և առաջին օգնություն - 126 ժամ**
- **Քույրական գործը գերիատրիայում - 36 ժամ**
- **Հիվանդի խնամք - 36 ժամ**
- **Քույրական գործը նյարդաբանությունում - 72 ժամ**
- **Քույրական գործը հոգեբուժությունում - 108 ժամ**
- **Քույրական գործը քիթ,կոկորդ,ականջի հիվանդությունների ժամանակ - 60 ժամ**
- **Քույրական գործը ակնաբուժությունում - 60 ժամ**
- **Աղետների բժշկություն - 156 ժամ**
- **Համաճարակաբանություն - 36 ժամ**
- **Քույրական գործը վարակիչ հիվանդությունների ժամանակ - 72 ժամ**
- **Վարակիչ հիվանդություններ - 50 ժամ**
- **Մաշկային և սեռավարակ հիվանդություններ - 60 ժամ**
- **Քույրական գործը մաշկային և սեռավարակ հիվանդությունների ժամանակ – 60 ժամ**
- **Ձուլման գործ - 72 ժամ**
- **Դեղագործական քիմիա - 90 ժամ**
- **Դեղագործության կազմակերպում և էկոնոմիկա - 90 ժամ**
- **Դեղագործական մարկետինգի և մենեջմենթի հիմունքներ - 90 ժամ**
- **Բժշկական և դեղագործական ապրանքագիտություն - 72 ժամ**
- **Դեղերի դեղատնային տեխնոլոգիա - 54 ժամ**
- **Դեղերի գործարանային տեխնոլոգիա - 72 ժամ**
- **Ֆարմակոգնոզիա - 90 ժամ**
- **Անօրգանական քիմիա - 36 ժամ**
- **Օրգանական քիմիա - 36 ժամ**
- **Անալիտիկ քիմիա - 36 ժամ**
- **Կլինիկական պաթոլոգիա - 36 ժամ**

Մրցույթն անցկացվելու է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին, քոլեջի կողմից նախապես կազմած բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային / մոդուլին/ և մանկավարժական գործունեությանը:

Մրցույթին կարող են մասնակցել ՝

Մասնագիտական առարկաների դասավանդման դեպքում այն անձը, ով ունի տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչներով սահմանված պահանջներին համապատասխան մասնագիտություն՝ մասնավորապես դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեութան փորձ:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1/ Դիմում /Ձև1/

2/ կրթության մասին հավաստող փաստաթղթեր/ դիպլոմ՝ բնօրինակը և պատճենը/

3/ անձնագիր /բնօրինակը և պատճենը

4/աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք / առկայության դեպքում/

5/ ինքնակենսագրություն /Ձև 4 /

6/ մեկ լուսանկար՝3x4 չափի.

7/ այլ պետության քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8/ Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկը /բնօրինակը և պատճեն/,

9/ հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր / դրանց առկայության դեպքում/

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության օրվանից մինչ օգոստոսի 17-ը ներառյալ:

Մրցույթը տեղի կունենա 2026թ. օգոստոսի 20-ին «Գավառի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ում:

Հացե. Գավառ, Նալբանդյան 91/1, բջջ. +374 33 02-62-30